

ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ



2019թ. մայիսի 17-ին Տուշայի համալսարանում (Վիտերբո, Իտալիա) տեղեկատվական օր էր՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի համալսարանների հետ հաջողված համագործակցության պատմությանը:

Տեղեկատվական օրվա ավարտից հետո ԳԿՄԿ պատվիրակությունը հանդիպեց Տուշայի համալսարանում սովորող ուսանողներին, քննարկեցին նրանց ուսումնառության ընթացքը, հաջողություններն ու խնդիրները, որի արդյունքում ս.թ. մայիսի 22-ին հանդիպում տեղի ունեցավ Տուշայի համալսարանի արտաքին կապերի բաժնում՝ քննարկելու և լուծում գտնելու թղթաբանությանն և ֆինանսավորմանն առնչվող հարցերի կապակցությամբ:

Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը ս.թ. մայիսի 20-ին այցելեց Տուշայի համալսարանի մի շարք դեպարտամենտներ և լաբորատորիաներ, մասնավորապես՝

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ. այս դեպարտամենտը եզակի է նրանով, որ Լացիոյի տարածաշրջանի միակ դեպարտամենտն է, որն իրավասու է դասավանդելու և հետազոտություններ կատարելու գյուղատնտեսական, անտառաբուծական, բնապահպանական գիտությունների և ագրոկենսատեխնոլոգիայի ոլորտներում: Ուսուցումը սերտ կապված է հետազոտության հետ, և այս կապը ավելի է սերտանում, երբ եռամյա բակալավրիական ծրագիրը խորանում է մագիստրոսական ծրագրում, իսկ

ասպիրանտական ծրագրի հետազոտական աշխատանքներ կատարելիս՝ հասնում առավելագույն մակարդակի:

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ. դեպարտամենտը կենսաբանության և բնապահպանության ոլորտներում պատրաստում է հմուտ տեխնիկներ և ոլորտի մասնագետներ: Այստեղի շրջանավարտները կարող են արտադրողական և տեխնոլոգիական գործունեություն ծավալել զանազան պրակտիկ ոլորտներում, ի հավելումն դրան՝ բազմաթիվ վերլուծական ծառայություններ իրականացնել: Էկոլոգիայի և կենսաբանության դեպարտամենտն ունի բազմաթիվ լաբորատորիաներ, որտեղ ուսանողներն աշխատում են իրենց ավարտական թեզերի և ասպիրանտական ավարտական ատենախոսությունների ուղղությամբ: Դեպարտամենտը համալրված է արդի սարքավորումներով և վերահսկվում է դասախոսական կազմի, ինչպես նաև ազգային և միջազգային ճանաչում ունեցող հետազոտողների կողմից, որոնց աշխատանքները հրապարակվում են միջազգային առաջատար ամսագրերում:

Ս.թ. մայիսի 21-ին Տուշայի համալսարանում տեղի ունեցան վարչական անձնակազմի համար նախատեսված հանդիպումները: Արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանի գլխավորությամբ առաջին հանդիպումը տեղի ունեցավ Կրթական գրասենյակի և որակի պատասխանատու Պաոլո Կապուանիի հետ, ով ներկայացրեց ծրագրային հավատագրման գործընթացն ու առանձնահատկությունները, ծրագրային հավատարմագրման չափանիշներն ու ուսանողների/դասախոսների գոհունակության արդյունքների վերլուծության ձևաչափերը: Մասնավորապես քննարկվեց հետազոտական բաղադրիչը կրթության մեջ և այդ բաղադրիչի չափման ցուցանիշները, ինչպես նաև ներկայացվեցին ասպիրանտական կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացը:

Այնուհետև տեղի ունեցավ կրկնակի դիպլոմներին նվիրված հանդիպումը, որի ընթացքում վերջնական տեսքի բերվեցին կրկնակի դիպլոմների շնորհման մասին համաձայնագիրը և ուսումնական պլանները: Տուշայի համալսարանի

